ՀԻՆ ՀԱՅ ՇԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝ ՊՐՈՖ. Ն. ԱԴՈՆՑ

I

Հայ անդրանիկ համալսարանը հրատարակել է իր անդրանիկ «Գիտական տեղեկագիրը»։

Առիթը Հայաստանի խորհրդայնացման հնգամեակն է եղել եւ տեղեկագիրը նուիրուած է հայ բանուոր-գիւղացիներին (իմա՛ բանուորներին եւ գիւղացիներին)։ Հրատարակութիւնը տօնական երեւոյթի հանդամանք ունի եւ օրուան պատշաճ յօդուածն է՝ «Դիտողութիւններ հին Հայաստանի շինականների դրութեան մասին»։ Հեղինակն է պ. Յակոբ Մանանդեան, Երեւանի համալսարանի պրոֆեսորներից։

Յօդուածագիրը իրաւամբ դանդատւում է որ մեր անցեալը մնում է տակաւին մութ, «մանաւանդ հայոց պատմական կեանքի ներքին իրական կողմերը, նրա սոցիալ-տնտեսական ու քաղաքական առանձնայատուկ հիմնական ոյժերը»։ Հետեւում է տխուր յայտարարութիւն, որ այդպիսի աշխատութիւններ չկան եւ որ իր յօդուածը նախապատրաստական աշխատանք է միայն, մի շարք դիտողութիւններ, որոնց նպատակն է պարզել «շինական դասի դրութեան հաւանական ընդհանուր գծերը մարզպանական Հայաստանում»։

Յօդուածագիրը յայտնում է, որ շինականների վիճակը «ամենադժուար ուսումնասիրելի խնդիրներից մէկն է», որ մատենագրական աղբիւրները յատկապէս այս մասին «լուռ ու մունջ» են։ Այսպէս է խօսում յօդուածի ներածականում։ Իսկ վերջը, ուսումնասիրութիւնը կատարելուց յետոյ, իրաւունք է համարում յայտարարել, որ շինական դասի դրութիւնը «այնքան էլ մութ եւ անորոշ չէ, ինչպէս մինչեւ այժմ կարծուել է»։ Ասել է թէ դժուարութիւնները հարթուել են, մութ խնդիրը լուսաւորել։

Տեսնենք, ի՛նչ լոյս է բերում պ. Մանանդեանը շինական դասին։

Առաջին միտքն, որ յայտնում է, յուսախաբութեան սառն ջուր է, իբրեւ թէ հնում համայնական հողատիրութիւն է եղել Հայաստանում եւ Արշակունեաց շրջանում եւ նրանից յետոյ։ Աւելի հրապուրիչ նորութիւն չէր կարելի ընծայաբերել «բանուոր-գիւղացիներին»։

Սակայն, բանահիւսութիւնը իրաւամբ կարող է խրախուսել այս նորութիւնից։ Հայաստանի երկու խոշոր հարեւան պետութիւնները, իրանական արեւելքը եւ բիւզանդական արեւմուտքը, որոնց ազդեցութեան տակ կերտուած է հայ կեանքը, ծանօթ չեն բնաւ համայնական հողատիրութեան։ Արեւելեան ֆէոդալականութիւնը գիտէ տոհմային հողատիրութիւն, բայց ոչ համայնական։ Ինչ վերաբերում է Բիւզանդիային, մինչեւ վերջին ժամանակներս արդարեւ ընդունուած կարծիք էր, որ համայնատիրական տնտեսութիւններ են եղել, բայց այժմս հերքուած է այս տեսութիւնը բոլորովին, խնդրին նայող պատմական յիշատակարանների լուրջ քննութեամբ։

Այսպիսի պայմաններում համայնատիրական կարգեր որոնել Հայաստանում, նշանակում է առնուազն արկածաւոր գիւտեր անել։

Եւ ի՛նչ հիմ ունի պ. Մանանդեան։

* * *

Խորենացին պատմում է, որ Վաղարշակ թագաւորը սահմանեց որ միայն անդրանիկ որդին ապրէ իր մօտ արքունիքում, իսկ միւսները գնան բնակելու Հաշտենից գաւառը։ Արտաւազդ թագաւորը նոյն նկատումով իր մօտ է պահում միայն երէց որդուն, իսկ միւսներին յատկացնում է Աղիովիտ եւ Առբերանի գաւառները։

Տիրան արքայի ժամանակ Հաշտեանցիք նեղ գտնելով իրենց սահմանները խնդրում են, որ ընդարձակէ իրենց ժառանգութիւնը։ Թագաւորը հրամայում է, որ մի մասը գնայ Աղիովիտ եւ Առբերանի, իրենց ազգակիցների մօտ։ Սակայն, վերջիններս տրտնջում են, առարկելով որ իրենց հողն եւս պակաս է։ Տիրանը վճռում է՝ «ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէին հաւասար տրոհել